

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ւ*.

- 1) հար-ան, ազ-ազ, տ-ական, տեր-աթափ
- 2) ոսկ-որել, ոսկ-արս, պարթ-, գոտ-որ
- 3) հոգ-որ, իջ-անել, սերկ-իլ, կար-որ
- 4) հոգ-իճակ, թեպետ-, օթ-ան, բ-եռել

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ց*.

- 1) պախուր-, տր-ակ, հայա-ք, երկյուղա-ություն
- 2) ցն-ոտի, ճրագալույ-, խ-կել, կաթնահուն-
- 3) ար-ունք, մտա-ածին, խուր-, հիա-ք
- 4) ուր-, դաղ-, նստակյա-, կե-վածք

3 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում *խ*.

- 1) տա-տակամած, զմրու-տ, դշ-ուիի, ու-տափուշ
- 2) հա-ճապակի, փտա-տ, ջա-ջա-ել, երկնամու-
- 3) թա-տ, բա-տակից, մա-թանք, նա-ճիր
- 4) թա-ծոտ, ու-տագնաց, գա-թական, թ-կենի

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա.

- 1) ու-ել, տանջա-ուկ, հո-երգություն, ե-որդ
- 2) ըն-իմադիր, ու-ակի, եր-ենցաղ, հո-ել
- 3) մ-կահողմ, անդո-ավետ, չո-որդ, խորագ-ին
- 4) տա-ական, վազքու-ի, ի-երորդ, բե-ի

5 Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով:

- 1) ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ՎՈՒՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԱ, ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔ, ՍՅՈՒՆՅԱՅ ԱՇԽԱՐՀ
- 2) ՌՈՒԲԻՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՌՈՒԱՆԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍԱՏԱՆԱՅԻ ԿԱՍՈՒՐԶ
- 3) ՍԱՆՆԻԿՈՎԻ ՆԵՂՈՒՅ, ՍԱՍԱՆՅԱՆ ՏՈՀՄ, ՊՈՒԵՐՏՈ ՌԻԿՈ, ՍԵԼԵՎԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 4) ՄՊԻՏԱԿ ԾՈՎ, ՍԻՐԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ, ՍՄԲԱՏ ԳՈՒՆԴՍՏԱԲԼ, ՌԻՐԱՐՏՈՒԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

6 Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում *անջատ*.

- 1) Սանկտ(Պետերբուրգ), տեր(ու)ծառա, թփից(թուփ), բուրդ(զգել)
- 2) վաղուց(ի)վեր, երկու(երրորդ), իննսուն(ինը), հույս(տալ)
- 3) թել(ասեղ), ներս(զցել), տոհմից(տոհմ), ազգ(անուն)
- 4) քար(տաշել), արքայից(արքա), որդան(կարմիր), վարդ(ազգի)

7 Ո՞ր շարքի բոլոր բառերում կա երկհնչյունի հնչյունափոխություն.

- 1) կառուցել, լծակից, լուծարել, ատենապետ
- 2) գուգահեռ, շահութաբեր, կենսագիր, կուսական
- 3) սփռված, ալեգարդ, գուժկան, տարակուսանք
- 4) ուխտադրուժ, աստամնաբուժարան, խուզարկու, հրապուրիչ

8

Ո՞ր շարքի բոլոր բառերում կա արմատի հնչյունափոխություն.

- 1) ակնդետ, ցուցահանդես, միջակետ, շնչասպառ
- 2) գինեգործ, բուժարան, սառցահատ, թիկնապահ
- 3) կիսատ, հմտություն, ընդդեմ, վարչապետ
- 4) ընչաքաղց, իջևան, ապօրինի, մատենագիր

9

Համարակալված բառերից ո՞րը հոմանիշ չէ մյուսներին.

- 1) վաղորդյան
- 2) այգ
- 3) արևագալ
- 4) արշալույս

10

Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:

- 1) Դու շատ լավ գիտես՝ **ստեր** չեմ հանդուրժի:
- 2) Եթե նա այս անգամ էլ **ստեր**, հայրն արդեն չէր ների:
- 3) Զեզնից **ստեր** շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:
- 4) **Ստեր** տարածելով է մրցակիցներին իր ուղուց հեռացրել:

11

Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր.

- 1) մրցակից, գնդակ, սփռոց, կառույց
- 2) վարձկան, ճամփորդ, ցավագին, թանկագին
- 3) արգելակ, կոճակ, ալյակ, պատանեկան
- 4) լայնակի, հայրենի, հոսանք, մարդատար

12

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ.

- 1) գրագետ, լեռնագնաց, տեղատարափ, ընձառյուծ
- 2) նույնպես, գաղթօջախ, սնափառ, գերկարճ
- 3) վրեժխնդիր, մեղմահունչ, առմիշտ, ոտնաչափ
- 4) մայրամուտ, լիառատ, հականիշ, հուշարձան

13

Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգնակի թիվն է կազմվում –ներ վերջավորությամբ.

- 1) դերբայ, ամսաթիվ, պատմաբան, երևանցի
- 2) դասընկեր, նախամարդ, խճաքար, ժամացույց
- 3) օղաչու, ուղևոր, բեռնակիր, մեծատուն
- 4) խցանահան, գիսաստղ, թվաշարք, տեղաբնակ

14

Տրված բառերից քանի՞սն են ենթարկվում *ա* ներքին հոլովման.

անուն, գարուն, դոփյուն, հեռագրասյուն, գումարում, դեղատուն, քաջություն, անկյուն, գինետուն, աշուն:

- 1) բոլորը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) վեցը

15 **Ո՞ր նախադասության մեջ ածական կա:**

- 1) Փառասիրության բաղձանքը մարդուն հաճախ չափից ավելի է խոսել տալիս իր արած գործերի մասին:
- 2) Ես բնավ ցանկություն չունեմ միևնույն գրվածքը կարդալու:
- 3) Իշխանի փառքն ու հարստությունը չափվում են հասարակությանը տված օգուտով:
- 4) Ծնողները պարտավոր են իրենց գավակներին որակյալ կրթությամբ զինել:

16 **Քանի՞ տեսակ դերանուն կա տրված հատվածում:**

Ա՛խ, իմ բախտը կանչում է ինձ,
Չեմ հասկանում՝ դեպի ուր.
Դողում է պաղ դրա ձենից
Իմ սիրտը՝ սև ու տխուր...

- 1) չորս
- 2) մեկ
- 3) երկու
- 4) երեք

17 **Ո՞ր շարքում ստկածանցավոր բայ չկա.**

- 1) առնող, ունկնդրում, ծառանալ, կանչեմ
- 2) մռնչալ, մեկնում, փախել, մնացել
- 3) կմեռնի, կանգնելու, երկմտել, զարմանա
- 4) վերծանել, պիտի հնչի, խառնած, բռնել

18 **Ո՞ր նախադասության մեջ ապակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- 1) Հայաստանում խմելու ջրի մեծ պաշարներ կան:
- 2) Միրտ չունեի լսելու եղբոր կշտամբանքները:
- 3) Նա բուժվելու էր գնում եղբոր պնդմամբ:
- 4) Քո ուզածը երբեք էլ չի լինելու:

19 **Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:**

- 1) Պատմականությունը պահպանված էր:
- 2) Ջինվել ենք ժամանակին:
- 3) Վասակի դավաճանության հարցը վիճելի է:
- 4) Ծիշտն այսօր դա է:

20 **Ո՞ր նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:**

- 1) Ընկերոջը տուն գնալիս էր հանդիպել:
- 2) Գիտեր, որ իրեն օրեր շարունակ տանել-բերելու են:
- 3) Նա արդեն ձեռք էր բերել օլիմպիադային մասնակցելու իրավունք:
- 4) - Սևանի ջուրը խմելո՞ւ է,- հարցրեց զբոսաշրջիկը:

21

Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ չկա:

- 1) Գու պիտի հնչես, հնչես հաղթական, Իմ հի՛ն հայ լեզու՝ բարձր ու սրտաբուխ:
- 2) Նրան և ընտանիքին զարդարում էր առաքինի լինելը:
- 3) Կաղնի տնկելիս պապը երևի պատկերացրել էր դրա այժմյան վեհությունն ու գեղեցկությունը:
- 4) Ծառի տակ հավաքվածները քննարկում էին օրվա իրադարձությունները:

22

Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր չկա:

- 1) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, մասրենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեգօծ արևի տակ, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:
- 2) Բայց Պետրոսին հարկավոր էր մի ծածկ՝ անձրևից պատսպարվելու համար, ուստի այդտեղ գտնվող թախտին շտապ-շտապ փռելով իր անկողինը՝ պառկեց քնելու:
- 3) Ծերունի կառապանը երկիմաստ ծիծաղում էր այդ մանրախնդիր մարդկանց վրա:
- 4) Պատշգամբի սյունաշարերին կախված գույնզգույն լապտերները լուսավորում էին ծաղկանախշ գորգերով զարդարված սրահը:

23

Ո՞ր նախադասության մեջ տեղի պարագա չկա:

- 1) Ձիերը ահ ու սարսափով կանգնում էին կիսաքանդ կամրջի առաջ՝ վախենալով նրանով անցնելուց:
- 2) Անդոն երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:
- 3) Գյուղից ներքև՝ մի բարձր ժայռի մոտ, գետն արմունկ է կազմում ու կորչում քարերի արանքում:
- 4) Կուրծքը սպիտակ ջրածտերը թռչում են քարից քար, կրծքերը երերացնում, ծվծվում:

24

Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Շատ տարիներ առաջ (1) Վանա ծովի ափին ապրում էին մարդ ու կին (2) Գնելն ու Շահանդուխտը: Այդ բարի մարդիկ անփարատելի վիշտ ունեին (3) Աստված նրանց զավակ չէր պարգևում: Նրանք անսալով դրացիների խորհրդին (4) գնացին ամենագորավոր սրբի (5) Գրիգոր Նարեկացու շիրմին (6) այցի և հրաշք կատարվեց (7) չանցած ինն ամիս (8) արու զավակ ունեցան: Ի մեծարումն սրբի (9) տղային անվանակոչեցին Գրիգոր:

- 1) 1, 4, 5, 8
- 2) 2, 5, 8, 9
- 3) 1, 2, 4, 6, 9
- 4) 2, 3, 5, 7

25

Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Ձին սկսեց արածել իսկ ինքը սանձը բաց թողնելով (1) պատկեց խոտերին: Անպոտ օր էր (2) և քամի չկար: Թույլ-թույլ ճողփում էին Փարվանայի ջրերը իսկ լեռնանցքի կողմից մառախուղի մի հսկա զանգված դանդաղ սահելով (3) շարժվում էր դեպի լճի (4) մեղմ զեփյուռից թեթևակի կնճռոտված (5) կապտավուն մակերեսը:

Վահանը խոտերին թիկնած (6) նայում էր լճի փայլատ ջրերին (7) զգալով որ անցնում են այն հուսահատեցնող ընկճվածությունը (8) հոգու (9) այն անդուր նեղվածությունը որ տանջում էին իրեն (10) մոր հիվանդության լուրն ստանալու օրվանից սկսած:

- 1) 2, 4, 6, 7, 8
- 2) 2, 3, 4, 7, 9
- 3) 1, 2, 3, 6, 8
- 4) 1, 4, 5, 7, 9

26

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի կիրառվել:

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
Բա՛րձր, բա՛րձր,- հեռավոր ու մենավոր.
Այնտեղ՝ ցածում, դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
Դեռ խավար է այնտեղ դաժան ու լռին:

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) փոխաբերություն
- 4) շրջադասություն

27

Բառարանների ո՞ր տեսակին է պատկանում Հայկական սովետական հանրագիտարանը:

- 1) ճյուղային
- 2) ուղղագրական
- 3) ստուգաբանական
- 4) հանրագիտական

28

Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ
2. Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն
3. Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
4. Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն
5. Ընկեց ի մէջք օրիորդին ալանաց

- 1) 2, 1, 5, 3, 4
- 2) 3, 1, 2, 5, 4
- 3) 1, 3, 2, 4, 5
- 4) 1, 2, 3, 4, 5

29 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Մի՛ բազմապատկիր ցավս հեծության
Եվ մի՛ խոցոտիր վիրավորվածիս,
Մի՛ դատապարտիր արդեն պատժվածիս,
Բազմաչարչարիս մի՛ տանջիր նորեն...

- 1) «Բիրբիական», Հովհաննես Շիրազ
- 2) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 3) «Գանգատ», Ֆրիկ
- 4) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց

30 **Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար,
Սուր է հարկավոր կտրիճի ձեռքին:

- 1) «Ապոլլոնին»
- 2) «Մանկության օրեր»
- 3) «Ազատություն»
- 4) «Իտալացի աղջկա երգը»

31 **Տրված հատվածը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:**

Ո՛հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է աշխարհն այլ արդեն ...

- 1) «Միրել»
- 2) «Լճակ»
- 3) «Տրտունջք»
- 4) «Իմ ցավը»

32 **Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի ո՞ր հերոսին է վերաբերում:**

«Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե այ. Հ. Վարդոլյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

- 1) բանաստեղծ
- 2) բժիշկ
- 3) Մանուկ աղա
- 4) Աբիսողոմ աղա

33 **Ստեղծագործություններից քանիսի՞ հեղինակն է Գրիգոր Չոփրապը:**

«Այիմկա», «Այրին», «Գելը», «Համբերանքի չիբուխը», «Նամուս», «Ոսկի արաղաղ», «Մալբի», «Փոստալ», «Երկու տող», «Չարբողոն», «Երջանիկ մահը», «Ավելորդը», «Ճիտին պարտքը»:

- 1) յոթի
- 2) չորսի
- 3) հինգի
- 4) վեցի

34

Ո՞ր բառն է բաց թողած:

Ո՞վ քաղցրությունը նայվածքին իր ծաղիկ.
 Ո՞վ պերճությունը իր հրպարտ.
 Ճամբուն վրրա՝ իր քայլերուն հետքը վարդ,
 Ուր հեշտորեն կը հաժի դեռ իմ մենիկ....

- 1) գընացքին
- 2) նազանքին
- 3) հայացքին
- 4) աչքերուն

35

Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.
 Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն...

- 1) «Տաղ անձնական»
- 2) «Հարդագողի ճամփորդները»
- 3) «Հեռացումի խոսքեր»
- 4) «Դեպի լյառը Մասիս»

36

Ո՞ր հատվածը Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից չէ:

- | | |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <ol style="list-style-type: none"> 1) Ու կռվի դաշտում շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի չքնաղ հուրին Իրանի: | <ol style="list-style-type: none"> 3) Աշխարհքում հաստատ չկա ոչ մի բան,
Ու մի՛ հավատալ երբեք ոչ մեկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ հաղթության,
Ոչ սիրած կնկա տված բաժակին... |
| <ol style="list-style-type: none"> 2) Պտույտ է գալի ծաղիկ տիրուհին,
Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, որ ուրախ լինին,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն: | <ol style="list-style-type: none"> 4) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին,
քան թե հավատա կնոջ երդումին.
Նա՛ կավատ, վարար, մի չքնաղ դժոխք,
նրա բերանով Իբլիսն է խոսում: |

37

Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:

1. Առկայծում են կարոտագին, երագուն
2. Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազան
3. Մեղմ գիշերի գեղագանգուր երագուն
4. Հավերժաբար իրար կապված և բաժան

- 1) 2, 4, 1, 3
- 2) 3, 2, 1, 4
- 3) 2, 3, 4, 1
- 4) 2, 4, 3, 1

38

Ակտել Բակունցի ո՞ր պատմվածքից է հետևյալ հատվածը:

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզաց, ինչպես շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Ավին մինչև վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ:

Արջը ոռնոցով մի ոստյուն էլ արեց: Ավին շատ մոտ գգաց վիրավոր գազանի տաք շունչը...»:

- 1) «Սպիտակ ձին»
- 2) «Խոնարհ աղջիկը»
- 3) «Մթնածոր»
- 4) «Միրհավ»

39

Տրված բառերից քանիստ՞ւմ բաց թողած տեղում պետք է գրվի *n* .

ե-եսուն, ոսկո-, պայտա-, ժխո-, անախո-ժ, սարս-ալ, փ-փռալ, կ-ճիկ, բ-ոնգ, փ-թկացնել, մա-ախտղ, ուղղափա-:

40

Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավանկ.

սրբազան, մարդասպան, ձվածկ, նենգադավ, հպանցիկ, վարդաբույր, գրադարան, թիավարել, գարեջուր, ուխտադրուժ, ուսանող, բարձրաշխարհիկ:

41

Բառերից քանի՞սն են *հողակապով*.

աղեկտուր, առևտուր, բանիմաց, ուղեվճար, կիսաքանդ, ծաղկաման, հաղթանդամ, ամպամած, կղզյակ, գինեգործ:

42

Տրված բառերից քանի՞սն են կապ.

հանդերձ, միջև, երիցս, երբ, գրեթե, շնորհիվ, պատիվ, ի հեճուկս, հոգուտ, վրա:

43

Մահմանական եղանակի քանի՞ բաղադրյալ ժամանակաձև է գործածված տրված տեքստում.

Ծերունին երկար գամվել էր ջրելքի անցքին. ջուրը ճողփալով դուրս էր հորդում: Հետո նա քրթմնջաց, և այն, ինչ նա ասում էր, շատ ավելի մենախոսություն էր. «Դու, որ քո կյանքի համար մկան ծակին տասը շահի ես տալիս, ուրիշ կյանքերի հետ ո՞նց ես միլիոնատիրոջ խաղեր խաղում»: Եվ նա չգիտի, թե այս մարդը, որ տասը հազար տարի աղ է կերել, ինչու էլի նույն անալի վայրենին է:

44

Նշել տրված նախադասությունների ենթակաների քանակը:

1. Ի՞նչ է մնում գնացողին,
Ի՞նչ է մնում ինձ անելու:
2. Ինքս ինձ էլ երանի տամ,
Որ ձեզ պես թիկունք եմ ունեցել:
3. Ջրերը ձորից սար են բարձրանում,
Անձրև են դառնում արտերի վրա:
4. Վերջապես քի՞չ կան հրճվելու բաներ,
Եվ լալու բաներ քի՞չ կան աշխարհում:
5. Ա՛խ, ինչեր, ինչեր, ինչեր են անում,
Որ միլիոն տարվա մեր ծուխը կտրեն:
6. Ձեզ եմ դիմում, բոլո՛ր մարդիկ այս աշխարհի,
Մի հին հարցով, որ, ավա՛ղ, չի հնանում:

45

Համարակալված բառերից որո՞նք են իրար հականիշ.

1.հեղզ, 2.ներհուն, 3.տարտամ, 4.չքմեղ, 5.որոշակի, 6.թույլ

46

Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերբայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված:

- 1) Անպատմելի դառնությունների ու տանջանքների շղթա եղավ կյանքն այն օրից, երբ հեծելագունողը ուղղվեց դեպի հայրենիք՝ ձերբազատվելով պարսիկների քինախնդիր հետապնդումներից: *(ժամանակի պարագա)*
- 2) Ճիշտ է, ուխտյալ ժողովրդի զինվորագրվելը հուսադրող էր, բայց ինքը մտահոգ էր ծայրաստիճան: *(ենթակա)*
- 3) Լճի հյուսիսարևելյան ափին՝ դեմ հանդիման արձանացած լեռան փեշին, փռված էր հինավուրց մի ավան: *(որոշիչ)*
- 4) Հուլիսյան մի գաղջ օր՝ այդ ճանապարհով անփութորեն բարձրանալիս, տեսա մի երիտասարդի: *(ժամանակի պարագա)*
- 5) Չնայած եղանակի վատ լինելուն՝ Լևոնը վաղ առավոտից մինչև ուշ երեկո շրջում էր փողոցներում և փնտրում իր կորուստը: *(գիջման պարագա)*

47

Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա:

1. Մեծաքանքար քանդակագործ-մանրանկարիչը՝ Մոմիկը, ապրել ու ստեղծագործել է տասներեքից տասնչորսերորդ դարերում:
2. Նրա մանրանկարներն ու խաչքարերը թեև դարերի հնություն ունեն, բայց հոգեպարար տրամադրությամբ են տոգորում դիտողին:
3. Որտեղ էլ տեղադրված լինեն դրանք՝ անմիջապես տարբերվում են իրենց յուրօրինակ արվեստով:
4. Ով մեկ անգամ տեսել է Նորավանքը, որ նախագծել ու կառուցել է Մոմիկը՝ այլևս երբեք չի կարող մոռանալ ճարտարապետական այդ հրաշքը:
5. Թեպետ այդ եզակի կառույցը վեց հարյուրից յոթ հարյուր տարեկան է, սակայն, այսօր էլ հիացնում է ինքնատիպ կառուցողական արվեստով:
6. Թվում է՝ տեսիլք է, որին մարդկային ձեռք չի դիպել:

Նշիր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:

- 1) Հայաստանում այսպիսին էր դրությունը, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ: Մայիսի 26-ից հետո հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայրաստիճան. վրացիները, արբած իրենց անկախությամբ ու գերմանական հովանավորությամբ, թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք էլ իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող:
- 2) Այսպես վարվելու հիմքերը գորավոր էին. զարհուրելի էր կյանքը, և անկախությունն այդ օրերին թվում էր հեզմանք: Փաստորեն հայերին մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12 000 քառ. կիլոմետր, աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, լաց ու թշվառություն, կոտորած ու սարսափ:
- 3) Հրի ու սրի միջով անցնելով՝ Հայաստանը ձեռք բերեց անկախություն և կոչվեց անկախ կյանքի: Յնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի կողմից այն դիտվում էր անժամանակ ծնունդ: Ոմանք չէին հավատում նրան. «անկախություն» ու «հանրապետություն» բառերը դնում էին չակերտի մեջ:
- 4) Անկախության առաջին իսկ օրից վրաց կառավարությունն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրույթ արտահայտել, որ Վրաստանի հողի վրա շարունակում է մնալ օտար պետության մի իշխանություն: Հայերին ուղղվում էին աներկդիմի խոսքեր, թե նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը: Եվ դա այն պահին, երբ ամեն հաղորդակցություն Երևանի հետ կտրված էր, և Լոռու ու Փամբակի ձորերում թուրքերն ու տեղի մահմեդականները մաքրագործում էին հայկական գյուղերը:

Տրված հատվածներից որո՞նք են գրաբար:

- 1) Քանի գուզե քամին տանե՝ ծովեմեն ավագ չի՛ պակսի.
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սագ չի՛ պակսի...
- 2) Բարեկամութիւնն ալ ատանկ է. հարկ է, որ ան խորտակուի, որպէսզի կորուստին մեծութիւնը կարենանք զգալ և չափել:
- 3) Չիմ եարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցեք,
Թե երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, գտէրն յիշեցեք:
- 4) Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն:

Նշիր այն ուսումնական հաստատությունները, որտեղ սովորել է Վահան Տերյանը.

- (1) Գանձայի պետական դպրոց, (2) Մոսկվայի Լազարյան ճեմարան, (3) Սկյուտարի ճեմարան, (4) Վենետիկի Ռաֆայելյան դպրոց, (5) Սանկտ Պետերբուրգի համալսարան, (6) Թիֆլիսի Ներսիսյան դպրոց

Բ մակարդակ

51 Ո՞ր շարքում տառի կամ տառակապակցության թվային արժեքի սխալ կա.

- 1) Մ-200
- 2) Թ- 9
- 3) ԺԲ-12
- 4) ԾԴ-64

52 Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված բառ կա:

- 1) Գ-յուղը հանգիստ չէր. սպասում էր բանակ գնացած տղաների դարձին:
- 2) Այդտեղ ամեն ինչ նույնն էր, ինչ որ մեր բոլոր գյուղերում. մի փոքրիկ, տխուր եկեղեցի՝ քարերը մամռոտած, բայց հպարտ ու աներեր:
- 3) Եվ ինչպես բոլոր գյուղերում, այդտեղ էլ մարդիկ հազար տարի առաջվա պես ժամ էին գնում, մատաղ անում:
- 4) Տանուտերը սրանց բոլորին կանչեց ու հայտնեց, որ «թուղթ» է եկել, թող պատրաստ լինեն վաղը քաղաք գնալու:

53 Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.

- 1) այեհույզ, միջակետ, տխրահռչակ, վճարունակ
- 2) տնամերձ, պատվարժան, դռնփակ, հուշասյուն
- 3) փոշեկուլ, հանդիսատես, սրամիտ, սնահավատ
- 4) շնչահեղձ, չարագույժ, խնկաբույր, կիզանուտ

54 Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված արտահայտությունը գործածված ոչ դարձվածային իմաստով:

- 1) Նա իր առաջին իսկ ստեղծագործությամբ **նոր էջ բացեց** մեր արձակում:
- 2) Ազատագրական պայքարում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է, որ բոլոր ազգային կուսակցությունները **մի դրոշի տակ հավաքվեն**:
- 3) Մեր **դռները բաց են** բոլոր նրանց առաջ, ովքեր ցանկություն ունեն մեզ հետ համագործակցելու:
- 4) Այդ երգչուհին մեզ արդեն ձանձրացրել է բոլոր համերգներին **նույն երգը երգելով**:

55 Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր.

- 1) բնօրրան, լռակյաց, բարեկեցիկ
- 2) վճարունակ, ցայգալույս, միջնորմ
- 3) ընչաքաղց, հետաքննիչ, գործուղում
- 4) անհեռատես, շանթարգել, մեղմահնչյուն

56 Ո՞ր շարքի բոլոր բառերն են խառը հապավումներ.

- 1) հէկ, բուժանձնակազմ, գիտքարտուղար, ուսմասվար
- 2) Սևանհէկ, բուժմիավորում, քաղխորհուրդ, ուստարի
- 3) զագս, պետտուրք, դիզարժիչներ, ՀՀ
- 4) բանավան, բուհ, սանհանգույց, ԱՊՀ

57

Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:

- 1) Այս տարի լույս տեսավ վերջին վեպս:
- 2) Մինչև հիմա հիշում եմ մորս արցունքները:
- 3) Գիշերս կարևոր հանդիպում ունեմ:
- 4) Այդ արարքը վայել չէր քաջարի զինվորիդ:

58

Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի).

- 1) թարգմանել, վիճարկել, ուշանալ, մնալ
- 2) կանգնել, փոշոտել, օգնել, բռնել
- 3) վատնել, փշրտել, երկրպագել, խաղալ
- 4) նմանվել, շնորհել, հավատալ, զղջալ

59

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,
Մրսում էր կարծես վայրի նշենին...
- 2) Ինչո՞ւ ապշած եմ, լճակ,
Ու չեմ խայտար քու այլակք...
- 3) Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ,
Երբ ամեն ինչ երագում է հոգու հետ...
- 4) Մի հավք զարկի ես մի օր.
Թռա՞վ, գնաց վիրավոր...

60

Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի՞ տերկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

1. Որքան էլ մեծ վստահություն ուներ բերդակալի հանդեպ, թագուհին այնուամենայնիվ կարգադրել էր նրան բանալիները դոյակ բերել: *(գիջման պարագա)*
2. Դայակի շուրթերից լսելով այն, ինչ որ ինքն արդեն ստույգ իմացել էր, տիրուհին կրկին անձնատուր եղավ տխուր խորհրդածությունների: *(ուղիղ խնդիր)*
3. Ժամանակի իշխանությունը չէր արտոնել, որ ակադեմիայի դահլիճում նշվի նախկին դաշնակցականի հոբելյանը: *(ենթակա)*
4. Մտաբերո՞ւմ ես այն օրը, երբ դու և մեծ իշխանուհին վերադարձաք Խաչենից: *(որոշիչ)*

- 1) չորսի
- 2) մեկի
- 3) երկուսի
- 4) երեքի

61

Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:

1. *Դմիտրին իր սիրածին փրկելու համար իր վրա է վերցնում հանցանքը և նրա փոխարեն կախադան բարձրանում:*
Որպեսզի Դմիտրին փրկի իր սիրածին, իր վրա է վերցնում հանցանքը և նրա փոխարեն կախադան բարձրանում:
2. *Ես, ծանոթ չլինելով վրաց լեզվին ու վրացական թատերագրությանը, դժվարությամբ էի հետևում այդ ներկայացումներին:*
Ես, որ ծանոթ չէի վրաց լեզվին ու վրացական թատերագրությանը, դժվարությամբ էի հետևում այդ ներկայացումներին:
3. *Սիրանույշը, չնայած Արմենյանի նկատմամբ չսքողված հակակրանք ունենալուն, օգտվում էր նրա մտահղացումներից:*
Թեև Սիրանույշը Արմենյանի նկատմամբ չսքողված հակակրանք ուներ, օգտվում էր նրա մտահղացումներից:
4. *Հազարավոր հովեկներ էին գալիս հեռավոր քաղաքներից՝ վայելելու մեր լեռնային քաղաքի օդն ու ջուրը:*
Հազարավոր հովեկներ էին գալիս հեռավոր քաղաքներից, որպեսզի վայելեն մեր լեռնային քաղաքի օդն ու ջուրը:

- 1) երեքը
- 2) ոչ մեկը
- 3) մեկը
- 4) երկուսը

62

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*
Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
- 2) *Եթե հեռանալը հեշտ լիներ, Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ գյուղից:*
Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ:
- 3) *Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:*
Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:
- 4) *Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփռոցի վրա:*
Նա հետևում էր շշերը սփռոցի վրա դասավորող աղջկան:

63

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արաբներին, Մարգալետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,-հարցրեց թագուհին երկյուղած:

- 1) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե իրենք ինչ ուժով պիտի հաղթեն արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարգալետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգալետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

64

Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Ճանապարհի դեպի Գանձակ տանող հատվածում նրանք տեսան հայ-թուրքական բախումների տոկալի հետևանքները ամայացած բնակավայրեր կիսավեր տներ ծխացող ավերակներ: Ուղեկցորդը վազոն մտնելով խորհուրդ տվեց տղաներին չիջնեն գնացքից:

- 1) տրոհված որոշիչ
- 2) տրոհված հատկացուցիչ
- 3) բացահայտիչ
- 4) բազմակի անդամներ

65

Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Գրական երկերի դասակարգման հարցով զբաղվել են դեռևս անտիկ աշխարհում: Արիստոտելն իր «Պոետիկայում» արդեն խմբավորում է դրանք որոշակի սկզբունքով: Մասնավորապես, նրա գրքում մենք գտնում ենք գրական բազմազան ստեղծագործությունների բաժանումը երեք մեծ խմբի՝ էպոս, լիրիկա և դրամա:

- 1) հրապարակախոսական
- 2) գիտական
- 3) առօրյա-խոսակցական
- 4) վարչական

66

Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Բրոնզաձույլ հսկայի հեղինակը՝ Քարեսը, շատ անբուն և տանջալի գիշերներ անցկացրեց՝ անխոնջ աշխատելով արձանի յուրաքանչյուր տարրի վրա առանձին-առանձին: Ըստ պատմիչների՝ կերտվածքի բարձրությունը երեսունչորսից երեսունհինգ մետր էր՝ չհաշված մարմարյա հղկված պատվանդանը:
2. Հին Հունաստանի Հռոդոս կղզում մեր թվականությունից շատ առաջ՝ չորրորդ դարում, դորիական ցեղի բնակիչները կանգնեցրին արևի աստծու՝ Հելիոսի վիթխարի արձանը՝ ի նշան թշնամու դեմ տարած պանծալի հաղթանակի:
3. Ցավոք, բրոնզե հսկան կանգուն մնաց ընդամենը հիսունվեց տարի. երկու հարյուր քսանհինգ թվականին չքնադագեղ Հռոդոսը ենթարկվեց տարերային մեծ աղետի՝ աշխարհացունց երկրաշարժի: Չդիմանալով ստորգետնյա ցնցումներին՝ ծնկներից կոտրվեց և տապալվեց Հելիոսի արձանը:
4. Բրոնզաձույլ արձանի մասին լուրը անմիջապես տարածվեց հելլենիստական աշխարհով մեկ՝ դեպի Հռոդոս ձգելով բյուրավոր ճամփորդների:

- 1) 2, 1, 3, 4
- 2) 2, 3, 1, 4
- 3) 1, 4, 2, 3
- 4) 2, 3, 1, 4

Բնութագրումներից յուրաքանչյուրը ո՞ր հեղինակին է վերաբերում:

- | | |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------|
| ա. Սփյուռքահայ գրականության առաջին ներկայացուցիչներից և ականավոր դեմքերից մեկն է, ով առաջինը տազնապահար հնչեցրեց սփյուռքահայերի ճուլման վտանգի ահազանգը և սկզբնավորեց նահանջի ուղղությունը: | 1. Հ. Սահյան |
| բ. Նա ստեղծեց քարափների, ջրվեժների ու ծիածանների մի գունագեղ աշխարհ, որտեղ ապրող մարդը ևս օժտված է իրեն ծնող միջավայրի վեհությամբ: | 2. Հ. Մաթևոսյան |
| գ. Ժամանակակից հայ արձակի ամենախոշոր դեմքերից է, որը արդար կեցության և ազգային գոյի իր փիլիսոփայությամբ, գյուղական կյանքի ուրույն երանգներով հարստացրեց 20-րդ դարի հայ արձակը: | 3. Շ. Շահնուր |
| դ. Նա իր հետ բերեց զանգեզուրյան բնաշխարհի նախնական ու վայրի պատկերները: | 4. Ա. Բակունց |

- 1) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 2) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 3) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 4) ա-4, բ-1, գ-2, դ-3

Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակինն է:

- | | |
|----------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ա. Վ. Տերյան | 1. Բայց շուրջս թող որքան կուզե աշխարհը այս խնդա, ցնդի.
Ես՝ հաշմանդամ ու խելագար ու հավիտյան վտարանդի,
Գեպի երկինք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի՛
Իմ բա՛րձր, հին ու աստղային երազների ճանապարհով... |
| բ. Ե. Չարենց | 2. Հունձք կը ժողվեմ մանգաղով,
-Լուսնակը յարս է-
Ակոս-ակոս ման գալով:
-Սիրածս հարս է: |
| գ. Դ. Վարուժան | 3. Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու.
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝
Օղակելով լույս աստղերը մեկմեկու: |
| դ. Մ. Մեծարենց | 4. Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե: |

- 1) ա-3, բ-2, գ-1, դ-4
- 2) ա-1, բ-3, գ-2, դ-4
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-3, բ-1, գ-2, դ-4

69

Քառերից քանիստ՞ում և՛ արմատի, և՛ ածանցի հնչյունափոխություն կա.

գիտնական, միջնորդագիր, դատաքննչական, գնդացրորդ, գնացուցակ, նստաշրջան, հայրենասիրություն, երգչախմբային, մրցութային, վայելչադեմ

70

Քանի՞ բառազույգեր են իրար հականիշ.

աղքատ-մեծատուն, կիպ-մերձ, դյուրին-բարդ, հանգույն-ոսկեգույն, գողունի-գեղեցիկ, գժտվել-ընդհարվել, նզովք-անեծք, գառամյալ-դեռատի, իրագեկ-տեղյակ, մարմանդ-թույլ, տապ-շոգ, ապերջանիկ-դժբախտ:

71

Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարբերակների քանակը:

Բարձրանալով քարե փոքրիկ սանդուղքներով՝ մտա մի ընդարձակ սենյակ՝ ցածր առաստաղով. այնտեղ կային ինչ-որ անծանոթ դեմքեր, որոնք վիճաբանում էին:

1. **բարձրանալով** - անդեմ բայ, չեզոք սեռ, **դեմքեր** – հասարակ գոյական, հոգնակի թիվ
2. **մտա** - պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ, **մի** – քանակական թվական
3. **սանդուղքներով** – գոյական, գործիական հոլով, **այնտեղ** – տեղի մակբայ
4. **կային** - դիմավոր բայ, անկատար անցյալ, **ինչ-որ** – հարաբերական դերանուն
5. **որոնք** – հարաբերական դերանուն, **վիճաբանում էին** – սահմանական եղանակ, ածանցավոր

72

Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում Լ-ից առաջ ստորակետ պետք է դրվի:

1.Շիկնեցին Մեծ ու Փոքր Մասիսների գագաթները և երկնքի կանաչ-կապույտը ժպտաց վաղորդայնի շողերով: 2. Արաքսը սրընթաց դեպի Շարուրի դաշտն էր տանում իր ջրերը լափլիզելով աջ ու ձախ կողմերի քարակարկառները և տեղ-տեղ ողողում ափամերձ տարածքները: 3. Դաշտավայրը գրկաբաց ողջունում էր հանապազօրյա կյանքին և այստեղ-այնտեղ սլացիկ բարդիների արանքներից դեպի երկինք էին ոլորվում ծխի կապույտ ժապավենները: 4. Արաքսի ափին այգեստանների ծոցում առավոտն էր դիմավորում Արտաշատը և այն մատնում էր մայրաքաղաքի եռուզեռը: 5. Հարավարևմտյան մուտքի դուռը բացվել էր արդեն և երկու հասակավոր պահակներ աչքները զցել էին Արաքսի պղտոր ջրերին: 6.Դեմը ձգվում էր նեղ կամուրջը, որ դիմավորում էր գետի մոլեգին հարվածներին և երևում էր գարնանային վարարումը սպառնում էր նրա քարակերտ սյուներին:

73

Ո՞ր շարքերում են սխալ համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները.

1. հրասայլ – սայլակ
2. դեղագիր – դեղատոմս
3. հեռաձայն – հեռախոս
4. էրիկմարդ – ամուսին
5. ձայնասփյուռ – ռադիո
6. հեռատեսիլ – հեռադիտակ

74

Նշել բանաստեղծական տողերի ճիշտ հաջորդականության տարբերակը:

1. Հայոց լեռներում
2. Էն անլույս մըթնում
3. Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր
4. Գըժար լեռներում
5. Երկա՛ր դարերով գընում ենք դեպ վեր
6. Ու մենք անհատնում

75

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Միայն է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:

1. Շաղկապներն ըստ կազմության պարզ բառեր են:
2. *Սակայն*-ը կարող է կիրառվել և՛ որպես շաղկապ, և՛ որպես վերաբերական:
3. *Թե*-ն կարող է կիրառվել որպես համադասական շաղկապ:
4. *Մինչ, մինչև, մինչև որ, մինչև իսկ* բառերը ստորադասական շաղկապներ են:
5. Շաղկապները երբեմն կարող են դառնալ նախադասության անդամ:
6. Շաղկապները բառային նյութական իմաստ չունեն: